Մանկական արթրիտ

01.12.2019

Արթրիտը տարածված քրոնիկ աուտոիմունային հիվանդություն է, որի դեպքում ախտահարվում են ծայրամասային հոդերը: Ըստ վիճակագրության՝ յուրաքանչյուր 1000-րդ երեխայի մոտ կյանքի առաջին տարիների ընթացքում զարգանում է արթրիտ, և որպես կանոն այն ախտորոշում են մինչև 4 տարեկանը:

Երեխաների մոտ արթրիտի հետևանքով ախտահարվում են ծնկները, մեջքը, արմունկները և ուսերը: Քանի որ երեխաները հաճախ ճիշտ չեն կարողանում նկարագրել, թե որ հատվածում է ցավում, դժվարանում է հիվանդության ախտորոշումը: Այնուամենայնիվ կան հստակ սիմպտոմներ, որոնք օգնում են տարբերակել արթրիտը.

- Շարժվելու, քայլելու ցանկության բացակայություն
- Տպավորություն է ստեղվում, թե երեխան խնայում է իրեն
- Երեխան կաղում է առավոտյան կամ շարժումները շատ սահմանափակ են

Որո՞նք են հիվանդության զարգացման պատճառները.

- Վնասվածքներ
- Վիտամինների անբավարարություն
- Ինֆեկցիաներ
- Վիրուսներ
- Ցրտահարում
- Նյարդային համակարգի հիվանդություններ
- Նյութափոխանակության խանգարումներ

Ցիկլիկ ցիտրուլինացված պեպտիդի նկատմամբ հակամարմինը (Anti CCP) հանդիսանում է ռևմատոիդ արթրիտի վաղ մարկեր: Այն հնարավոր է հայտնաբերել արյան մեջ հիվանդության սիմպտոմների ի հայտ գալուց դեռ 1-1.5 տարի առաջ:

Անհրաժեշտ լաբորատոր հետազոտություններ.

- Anti CCP
- C-ռեակտիվ սպիտակուց
- Ռևմատոիդ գործոնի (RF)
- Հակաստրեպտոլիզին O (ASLO)

«Հայ ծնողների ակումբ»
Կայք՝ www.ArmParents.com
Ֆեյսբուք՝ Հայ ծնողների ակումբ
Հեռ.՝ 091 416247

«Բիոմեդ» ախտորոշման լաբորատորիա
Կայք՝ www.biomed.am
Ֆեյսբուք՝ Biomed
Հասցե՝ Եղ. Թադևոսյան 5 և Գայի պողոտա 8
Հեռ.՝ 010 483879, 011 483879